«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2017 թվականի

Համալսարանի 2016 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքների և 2017 թվականի խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Համալսարանի 2016 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքները և 2017 թվականի խնդիրները»** հարցը (զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Խ.Ա.Մխիթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2016 թ. գիտահետազոտական աշխատանքների ծավալն, ընդհանուր առմամբ, կատարված է:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանական գիտահետազոտական գործունեությունը կազմակերպվել և իրականացվել է համաձայն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգով» սահմանված նպատակների, իսկ 2017 թ. գիտահետազոտական գործունեության խնդիրների արծարծման համար որպես հիմք է ծառայել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2014-2018 թթ. գործունեության բարելավման գործողությունների պլանը»:

2016 թ. համալսարանում շարունակվել է ներհամալսարանական 4 գիտաուսումնական խմբերի թեմաների, ամբիոնային 88 թեմաներով գիտահետազոտական աշխատանքների, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 3 դրամաշնորհային և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 5 գիտական ուղղություններով ծրագրերի իրականացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ներհամալսարանական գիտաուսումնական խմբերի հետազոտական աշխատանքների կատարումը՝ գիտական և ակադեմիական ուղղություններով, մասնավորապես՝ գիտաուսումնական խմբերի թեմաներին մասնակցել են 27 հետազոտողներ՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ասպիրանտներ, հայցորդներ և մագիստրանտներ: Ընդհանուր առմամբ՝ ներհամալսարանական գիտաուսումնական խմբերի թեմաների և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գիտահետազոտական ուղղությունների մեջ ներգրավված է եղել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 18%-ը: Գիտաուսումնական խմբերն իրականացրել են հետևյալ հետազոտությունները. «Սպառողների (ուսանողների) բավարարվածության հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթական ծառայությունների շուկայում և ՀՊՏՀ ներքին կանոնակարգերի մշակում», «Գլոբալացումը և զարգացող երկրների մարտահրավերները», «Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», «Ուղեղային կենտրոններն արդի քաղաքական գործընթացներում»:

2016 թ. շարունակվել է ամբիոնային 88 թեմաներով հետազոտությունները, որոնք կատարվել են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, լեզուների բնագավառներում:

2016 թվականին համալսարանում կատարվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ հետևյալ 3 թեմաները՝ «ՀՀ տնտեսական ու սոցիալական զարգացման վրա գիտության և կրթության ազդեցության ինտենսիվացման գերակայությունները և կառուցակարգերը», «Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում», «Մաքսային Միության ընդլայնումը որպես անդամ երկրների մրցունակության բարձրացման գործոն. Հայաստանի Հանրապետության և Բելառուսի օրինակով»:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2016 թվականի գիտական ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվել են «Տնտեսագետ» հրատարակչությունում: «Ամբերդ» մատենաշարն ընդգրկում է 6 համախումբ մենագրություն:

2016 թվականին ավարտին են հասցվել 2015 թվականի հետազոտական թեմաների մրցույթի հիման վրա ձևավորված 5 հետազոտական թեմաները, որոնց արդյունքները գիտական խորհրդի երաշխավորությամբ հրատարակվել են իբրև գիտական հետազոտության հաշվետվություններ ըստ «Ամբերդ» մատենաշարի հերթական համարների: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է մեկ հետազոտական թեմա: Ընդհանուր առմամբ՝ 2016 թվականի ընթացքում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների մեջ ներգրավված են եղել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի 27 աշխատող և 10 ասպիրանտ ու մագիստրանտ:

2016 թ. նոյեմբերի 15-18-ը անցկացվել է համալսարանի 26-րդ գիտաժողովը՝ «Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով:

Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվել են «Կառավարում, կրթության կառավարում և մարդկային ռեսուրսների տնտեսագիտություն», «Ֆինանսական շուկաներ և հաշվապահական հաշվառում», «Մակրոէկոնոմիկա և միջազգային տնտեսական հարաբերություններ», «Լեզվաբանություն, արտակարգ իրավիճակներ և քաղաքաշտպանություն» խորագրերով (համապատասխան բաժանմունքներում). ներկայացվել է շուրջ 100 զեկուցում: Հրատարակության գործընթացում են գիտաժողովի նյութերը մոտ 40 մամուլ ծավալով:

2016թ. իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա հրատարակվել են 3 դասագիրք, 25 ուսումնական ձեռնարկ, 16 մենագրություն, 6 դասախոսությունների նյութեր, 400 գիտական հոդված, 29 մեթոդական ցուցում, 8 ուսումնամեթոդական աշխատանք: Հոդվածներից 106-ը լույս են տեսել արտասահմանյան պարբերականներում:

Գիտական ամսագրերում 2016 թվականին, 2015 թվականի համեմատությամբ, մոտ 20%-ով պակասել է համալսարանի գիտնական մանկավարժների, ասպիրանտների ու մագիստրանտների հրապարակումների թիվը: Միևնույն ժամանակ, շուրջ 1.8 անգամ ավելացել է հրապարակումների քանակը միջազգային ամսագրերում:

Դրանց շուրջ 45%-ը բաժին է ընկել 6 ամբիոնի (մակրոէկոնոմիկայի՝ 9.4%, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման՝ 8.0%, կառավարման՝ 7.2%, տնտեսագիտության տեսության՝ 7.0%, տնտեսամաթեմատիկական մեթոդների՝ 7.0%, բանկային գործի և ապահովագրության՝ 6.7%):

2016 թվականի մայիսին կազմակերպվել է համալսարանի ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) 37-րդ նստաշրջանի առաջին փուլը, որին մասնակցել է բակալավրիատի շուրջ 100 ուսանող: Նրանցից 65-ը անցել են երկրորդ՝ համալսարանական փուլ: Երկրորդ փուլին մասնակցելու է նաև 30 մագիստրանտ (նախորդ տարի՝ 26): Համալսարանի ուսանողները մասնակցել են նաև այլ բուհերի կազմակերպած գիտաժողովների, կլոր սեղանների, բանավեճերի և մրցույթների: Մասնավորապես՝ ՀՊՏՀ ուսանողներն ու ասպիրանտները մասնակցել են Բյուրականում կայացած գիտական զբոսաշրջությանը նվիրված հավաքին ու Արցախի պետական համալսարանում անցկացված Ուսանողական գիտական ընկերության միջազգային նստաշրջանին:

Համալսարանի գիտական գործունեության միջազգայնացման առումով կարևորվել են հետազոտություններն ու դասավանդումը արտասահմանյան համալսարաններում, միջազգային հրապարակումները, մասնակցությունը միջազգային գիտաժողովներին, գիտական նստաշրջաններին և միջազգային ամսագրերի խմբագրական խորհրդի նիստերին: Համալսարանի աշխատակիցները 2016 թվականին Ֆրանսիայում, Իռլանդիայում, Գերմանիայում, Բելգիայում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում, Բուլղարիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսում, Ուկրաինայում, Մոլդովայում, Վրաստանում մասնակցել են գիտաժողովների: Միջազգային գիտաժողովների են մասնակցել նաև համալսարանի մագիստրանտներն ու ասպիրանտները:

2016 թ. դրությամբ համալսարանի ասպիրանտուրայում սովորում են առկա ուսուցման 33 (4-ը՝ արտերկրից), հեռակա ուսուցման 69 ասպիրանտ: Հաշվետու տարում առկա ուսուցման համակարգում ասպիրանտուրա են ընդունվել 11, հեռակա ուսուցման համակարգում՝ 15 դիմորդ: 2016 թվականին առկա ուսուցման համակարգի 11 ասպիրանտ-շրջանավարտներից 10-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն: Հեռակա անվճար ուսուցման համակարգում սովորող ասպիրանտներից 11-ն ավարտել են: Հաշվետու տարում տարբեր ամբիոններում ձևակերպվել է 6 հայցորդ (վճարովի հիմունքներով). հացորդի պարտականություններից ազատվել են 17-ը: Ասպիրանտուրայի արդյունավետությունը, ըստ առկա ուսուցման համակարգի, կազմել է 91.0% (նախորդ տարվա 90.0%-ի դիմաց):

2016 թվականին «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսը, պահպանելով իր պարբերականությունը, լույս է ընծայել 4 համար՝ ընդգրկելով մեծաթիվ հեղինակների ոչ միայն հանրապետության սահմաններից, այլև արտերկրից (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս, Իրանի Իսլամական Հանրապետություն, Սիրիայի Արաբական Հանրապետություն և այլն): «Բանբեր ՀՊՏՀ» հանդեսը շուտով հանդես կգա նոր միջազգային խմբագրական խորհրդով, որի կազմի մեջ կմտնեն պրոֆեսորներ ԱՄՆ-ի, Իտալիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի, Հունաստանի և այլ երկրների առաջատար համալսարաններից: Միջազգային խմբագրական խորհուրդը ստեղծվում է ամսագրի բարձր գիտական ներուժի ապահովման նպատակով: Խորհրդի առջև դրված խնդիրներից առավելապես կարևորվել են ամսագրի ռազմավարական զարգացման հիմնական ուղղությունների և հանձնարարականների մշակումը, գերակա թեմատիկ ուղղությունների մշակումն ու հատուկ թեմատիկ համարների թողարկման գծով առաջարկությունների ներկայացումը, գիտական հոդվածների գրախոսման և բարձրորակ,

միջազգային չափանիշներին համապատասխանող հրապարակումների ապահովումը, ամսագրի ներկայացումը միջազգային բուհերում, պետական մարմիններում և զանգվածային լրատվամիջոցներում:

Միաժամանակ, գիտական խորհուրդն արձանագրում է՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնցից են՝

- Scopus, Web of Science-ում հրապարակումների բացակայությունը,
- գիտաժողովներին, գիտական սեմինարներին և կլոր սեղաններին ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի պասիվ մասնակցությունը,
- ասպիրանտուրայի ընդունելության գործընթացում ՈՒԳԸ աշխատանքներին մասնակցության կարևորության ոչ բավարար մակարդակը,
- ֆակուլտետներում և ամբիոններում ՈՒԳԸ աշխատանքների քննարկման և վերահսկողության ցածր մակարդակը,
- հետազոտությունների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ոչ մեծ թիվը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. **Համալսարանի 2016 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքները գնահատել բավարար:**

2. **Ի կատարումն ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլանի, հանձնարարել.**

1) Գիտության և ասպիրանտուրայի բաժնին՝

- մշակել և գիտական խորհրդի **2017 թ. մարտի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել առաջարկություն գիտաուսումնական խմբերի մրցույթի անցկացման նպատակահարմարության վերաբերյալ.
- գիտական խորհրդի **2017 թ. մարտի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսի միջազգային խմբագրական խորհրդի կազմը.
- մշակել և գիտական խորհրդի **2017 թ. ապրիլի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել ՀՊՏՀ գիտության զարգացման երկարաժամկետ (2017-2027 թթ.) ռազմավարություն և դրա կատարման գնահատման չափանիշների ու չափորոշիչների կառուցակարգը.
- մշակել և գիտական խորհրդի **2017 թ. մայիսի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել «Գիտաուսումնական լաբորատորիաների ստեղծման և գործունեության» կանոնակարգը.
- «Հորիզոն 2020» և Ասիական Զարգացման բանկի «Կրթական համակարգի գիտահետազոտական գործունեության» ծրագրի շրջանակներում հետազոտությունների ֆինանսավորման նպատակով ուժեղացնել այդ ծրագրերին մասնակցության համար ինչպես գործընկերային կապերի հաստատման, այնպես էլ գիտահետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները.

- մշակել և գիտական խորհրդի **2017 թ. հունիսի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել ուսանողների ներգրավվածության աստիճանի բարձրացման և շահադրդման նոր, ժամանակակից կառուցակարգերի կիրառմամբ ուսանողական գիտական ընկերության աշխատանքների նոր կանոնակարգ.
- մշակել և գիտական խորհրդի **2017 թ. սեպտեմբերի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել ՀՊՏՀ երիտասարդ գիտնականների դպրոցի կանոնակարգը և դրա գործունեության չափորոշիչների գնահատման կառուցակարգը.
- մշակել և գիտական խորհրդի **2017 թ. հոկտեմբերի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել «ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և հրապարակման ակտիվության որակական գնահատման» կանոնակարգը.
- մշակել և **2017 թ. նոյեմբերին** գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել միջազգայնացման ֆինանսավորման պլանը.
- կազմակերպել ամբիոնների կողմից ներկայացված գիտահետազոտական թեմաների շնորհանդեսներ ըստ սահմանված ժամանակացույցի և գիտական խորհրդի **2018 թ. հունվարի** նիստին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

2) Ֆակուլտետներին, ամբիոններին, գիտության և ասպիրանտուրայի բաժնին, «Ամբերդ» հետազոտական կենտրոնին՝

- բարձրացնել ամբիոնների և ֆակուլտետների պատասխանատվությունը ՈՒԳԸ աշխատանքներին ուսանողների մասնակցության արդյունավետության բարձրացման տեսանկյունից.
- ամբիոններում կազմավորել ուսանողների մասնակցությամբ գիտահետազոտական թեմատիկ խմբեր.
- մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերում ավելացնել գիտահետազոտական բաղադրիչը.
- հաստատել կապեր համապատասխան ոլորտային կազմակերպությունների հետ (համատեղ գիտահետազոտական ծրագրեր, հետազոտողների փոխանակում, մասնակցություն միջազգային գիտաժողովներին և այլն).
- արտաքին ֆինանսավորման պայմանների վերաբերյալ տեղեկատվության տարածման կառուցակարգերի բազմազանեցման նպատակով ՀՊՏՀ պաշտոնական կայքում տեղադրել և մշտապես թարմացնել համապատասխան տեղեկատվություն «Հորիզոն 2020» և Ասիական Զարգացման բանկի «Կրթական համակարգի գիտահետազոտական գործունեության» ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների վերաբերյալ.
- ֆակուլտետների խորհուրդներում պարբերաբար քննարկել գիտահետազոտական գործունեությանը վերաբերող հարցեր.
- ապահովել ամբիոնների գիտահետազոտական ակտիվությունը.
- նպաստել գիտական հետազոտությունների գործնական ուղղվածության ապահովմանը և դրանց արդյունքների ներդրմանը պետական և մասնավոր հատվածներում, ուսումնամեթոդական նյութերում և կրթական գործընթացներում.

– ապահովել ամբիոնային հետազոտությունների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և թեկնածուական ատենախոսությունների թեմաների համապատասխանությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին, գիտության գերակա ուղղություններին, համալսարանի, ինչպես նաև արտասահմանյան գլխավոր հետազոտական ուղղություններին.
– ապահովել ամբիոնի աշխատակիցների ակտիվ մասնակցությունը համալսարանում անցկացվող սեմինարներին, գիտաժողովներին.
– ապահովել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտությունների արդյունքների հրապարակումների տարածումը շահառուների շրջանում:

3. 2017 թ. առաջնահերթ խնդիրներ համարել.

1) Գիտաուսումնական լաբորատորիաների ձևավորման ուղղությամբ աշխատանքների նախապատրաստումը, գիտաուսումնական խմբերի գործունեության արդյունավետության բարձրացումը և գիտական դպրոցների ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը:

2) Ներքին և արտաքին դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ընդլայնումը.

3) ՀՊՏՀ գիտության զարգացման երկարաժամկետ (2017-2027 թթ.) ռազմավարության, «Գիտաուսումնական լաբորատորիաների ստեղծման և գործունեության» և «ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և հրապարակման ակտիվության որակական գնահատման» կանոնակարգերի մշակումն ու իրագործումը:

4) Հայաստանյան և միջազգային համաժողովներին ու գիտական նստաշրջաններին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների մասնակցության ընդլայնումը:

5) ՀՊՏՀ երիտասարդ գիտնականների դպրոցի ստեղծումը:

6) Վեբ օֆ սայնսի (Web of Science), Գուգլ սքոլարի (Google Scholar) և Սկոպուսի (Scopus) տվյալների բազայում ներառված հրատարակություններում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ծավալի մեծացումը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

15.02.2017 թ.